



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 16.4-րդ կետի պահանջները,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ **Նելլի Հարությունյանը** (արտոնագիր № 563) 28.07.2020թ. գրավոր դիմում է ներկայացրել խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

հիմք ընդունելով Պալատի կանոնադրության 16.34-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը համաձայն որի՝ **փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարում է՝ փաստաբանների պալատի խորհրդին տրված գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից:**

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ ներգրավվելու վերաբերյալ 30.07.2020թ. գրավոր առաջարկ է ներկայացվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2017 թվականի ընտրությանը վարկանիշային հաջորդ առավել՝ 197 «կողմ» ձայներ ստացած փաստաբան **Արմեն Սամվելի Ֆերոյանին** (արտոնագիր № 1554), որը 31.07.2020թ. որպես Պալատի խորհրդի անդամ ներգրավվելու գրավոր համաձայնություն է տվել,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

**1. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Նելլի Հարությունյանի լիազորությունները համարվում են դադարեցված 2020 թվականի հուլիսի 29-ից:**

**2. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած և որպես ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ներգրավվելու համաձայնություն ներկայացրած փաստաբան Արմեն Սամվելի Ֆերոյանը (197 ձայն, 39-րդ տող) 2020 թվականի օգոստոսի 1-ից (գրավոր համաձայնությունը ներկայացնելու հաջորդ օրվանից) համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կազմում Նելլի Հարությունյանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

31 հուլիսի 2020թ.  
թիվ 145-Ա  
ք. Երևան